

**ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03**  
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

17.02.2003թ.

ժ. 10.00

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դանիելյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

**Հրավիրված էին՝**

Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Ն. Մուշեղյան (*Անփոփ վիճակագրության, հրատարակումների և մարկետինգի բաժնի պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*), Ն. Պողոսյան (*Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման վարչության պետ*)

**Օրակարգի նախագծում՝ երկու հարց.**

1. 2002 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Ն. Մուշեղյան/*

2. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության միասնական վիճակագրական տեղեկատվական համակարգի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Ն. Պողոսյան, Վ. Դավթյան/*

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. 2002 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Ն. Մուշեղյան/*

*Նշվեց, որ համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 10 և 11 հոդվածների, ՀՀ ՎՊԽ հաստատմանն է ներկայացվել «2002 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվության» նախագիծը: Հաշվետվության մեջ հիմնականում ընդգրկվել են 2002 թվականին կատարված միջոցառումներն ըստ խորհրդի կողմից հաստատված Ծրագրի:*

**Որոշեցին՝**

Հաստատել 2002 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը:

*/Բվեարկության արդյունքները - կողմն 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության միասնական վիճակագրական տեղեկատվական համակարգի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին.

*/Չեկուցող՝ Ն. Պողոսյան, Վ. Դավիթյան/*

*Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության կողմից մշակված ՀՀ ԱՎԾ միասնական տեղեկատվական համակարգի զարգացման հայեցակարգով նախատեսվում է վիճակագրական տեղեկատվության հավաքագրման, մշակման, պահպանման, վերլուծության և տարածման գործընթացների ավտոմատացում: Դրա հետ կապված ենթադրվում է միասնական մեթոդաբանական մոտեցման հիման վրա մշակել այդ նպատակի իրականացմանը միտված կիրառական ծրագրեր: Նախատեսվում է նաև միասնական կորպորատիվ համակարգչային ցանցի ստեղծում, որը կկապի բոլոր կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների տեղային ցանցերը: Մի շարք տարիների ընթացքում վիճակագրական տեղեկատվության համեմատման և պահպանման համար նախատեսվում է վիճակագրական տվյալների հիմնապաշարների ստեղծում: Նախատեսվող բոլոր աշխատանքները իրականացվելու են վիճակագրության ոլորտում վարվող քաղաքականությանը համապատասխան՝ հաշվի առնելով առկա պահանջներն ու սահմանափակումները:*

*- Դիտողություններ և առաջարկություններ*

*- Եթե ներկայացված Հայեցակարգով նախատեսված են միջոցառումներ, որոնց իրականացումը ֆինանսական միջոցներ է պահանջելու, հարկ է որ այդ մասին արձանագրվի Ներածությունում,- Նախագահ*

*- Հայեցակարգում առկա են ձևակերպումներ, որոնք հայեցակարգային են, փաստաթուղթը կարիք ունի վերախմբագրման և վերամշակման,- Վ. Դանիելյան*

*- 2004թ. և հետագա տարիների բյուջետային գործընթացների իրականացման ժամանակ բյուջետային հայտ ներկայացնելիս՝ հաշվի առնել Հայեցակարգի հիման վրա մշակվելիք միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման հնարավորությունների խնդիրը,- Նախագահ*

## **Որոշեցին՝**

1. Հավանություն տալ «ՀՀ ԱՎԾ միասնական վիճակագրական տեղեկատվական համակարգի զարգացման հայեցակարգի» նախագծի մշակման ուղղությամբ իրականացված աշխատանքներին.

2. Հանձնարարել Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչությանը, հաշվի առնելով նիստի մասնակիցների կողմից ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները՝ վերախմբագրել և լրամշակել Նախագիծը.

3. Առաջարկել ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանին՝ ապահովել Հայեցակարգի նախագծի վերջնական տարբերակի ներկայացումը Խորհրդի հաստատմանը ոչ ուշ քան մինչև 28.02.2003թ.

*/արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան